ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2020թ. N 253-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՌՈՍՏՈՄ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 2-րդ կետով, 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 9-րդ կետերով, 72-րդ հոդվածի 2-րդ մասով, 66-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշման 3-րդ կետի «գ» ենթակետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 16-ի «Ջերմուկ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը օրենսդրության պահանջներին համապատասխան ուղղակի վաճառքով օտարելու կամ վարձակալության տրամադրելու մասին» N 21-Ա որոշման 1-ին կետի «բ» ենթակետով և հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ Ռոստոմ Ռաֆիկի Եղիազարյանի դիմումը (մտից N 1158, 28.09.2020 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ Ռոստոմ Ռաֆիկի Եղիազարյանին Կեչուտ գյուղի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի 1993 թվականի հունիսի 29-ի որոշմամբ (Արձանագրություն թիվ 31, հիմք՝ Կեչուտ գյուղի վարչական ղեկավարի կողմից տրամադրված քաղվածք) սեփականաշնորհված հացահատիկի պահեստի շենքի (այսուհետ՝ շինություն) պահպանման ու սպասարկման համար առանձնացված Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղու N 40 հասցեում գտնվող համայնքային սեփականության 455,1 քմ մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 10-002-0458-0005) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով, հողի կադաստրային արժեքով օտարել վերջինիս:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության զբաղեցրած համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամաս,

բ) շինության սեփականաշնորհման պահից Ռոստոմ Ռաֆիկի Եղիազարյանն անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ, սակայն առանց իր իրավունքների իրավաբանական ձևակերպման օգտվում է համայնքի՝ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից:

3. Ռոստոմ Ռաֆիկի Եղիազարյանը Ջերմուկի համայնքապետարանի 900365031625 հաշվեհամարին պարտավոր է վճարել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կադաստրային արժեքը՝ հետևյալ հաշվարկով՝ 1 քմ–ը 810 (ութ հարյուր տաս) դրամ, ընդամենը՝ 368631 (երեք հարյուր վաթսունութ հազար վեց հարյուր երեսունմեկ) դրամ:

4. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ռոստոմ Ռաֆիկի Եղիազարյանի կողմից: :

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռոստոմ Ռաֆիկի Եղիազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 սեպտեմբերի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 սեպտեմբերի 2020թ. N 254-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 117-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածով և 14-րդ հոդվածի 6-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային (պետական) սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման աճուրդների անցկացման կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային (պետական) սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու նպատակով ստեղծել աճուրդային հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

հանձնաժողովի նախագահ՝ Սամվել Մարգարյան – համայնքի ղեկավարի տեղակալ

անդամներ՝ Գոհար Թադևոսյան – համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Արսեն Գառնիկյան – համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ–ճարտարապետ

Արման Հայրապետյան – աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ–աուդիտոր

Սաթենիկ Կարապետյան – աշխատակազմի առաջատար մասնագետ:

3. Ըստ անհրաժեշտության հանձնաժողովի աշխատանքներին ներգրավել նաև քննարկվող հարցերին առնչվող համապատասխան մասնագետների և ավագանու անդամների:

4. Սույն որոշման 2-րդ կետով ստեղծված հանձնաժողովի անդամ Գոհար Թադևոսյանին նշանակել արձանագրող, Սաթենիկ Կարապետյանին նշանակել աճուրդավար:

5. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2014 թվականի դեկտեմբերի 29-ի «Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային (պետական) սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարման և վարձակալման (կառուցապատման) տրամադրող հանձնաժողով ստեղծելու մասին» N 117-Ա որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 սեպտեմբերի 30
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկ համայնքի ղեկավարի
2020 թվականի սեպտեմբերի 30-ի
N 254-Ա որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՃՈՒՐԴՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ղեկավարի (այսուհետ՝ աճուրդի կազմակերպիչ) կողմից հրապարակային աճուրդների միջոցով Ջերմուկ համայնքի (Հայաստանի Հանրապետության) սեփականություն հանդիսացող հողամասերի (անշարժ գույքի) օտարման գործընթացը:

2. Աճուրդները կազմակերպվում և իրականացվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման և սույն կանոնակարգով սահմանված կանոններով:

3. Աճուրդներն իրականացվում են բաց դասական աճուրդի կազմակերպման ձևով:

4. Աճուրդների իրականացման նպատակով աճուրդի կազմակերպիչը ստեղծում է աճուրդային հանձնաժողով առնվազն 5 անդամով: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են համայնքապետարանի աշխատակազմի մասնագետներ, ըստ անհրաժեշտության հանձնաժողովի աշխատանքներին կարող են ներգրավել նաև համայնքի ավագանու անդամներ:

5. Աճուրդային հանձնաժողովի կազմից նշանակվում է աճուրդավար և արձանագրող:

6. Աճուրդային հանձնաժողովը իրավազոր է, եթե ներկա են աճուրդային հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ը:

7. Աճուրդի մասին հայտարարության (հրապարակային ծանուցման) տեքստը հաստատում է աճուրդի կազմակերպիչը:

8. Աճուրդին մասնակցել ցանկացողները լրացնում են սահմանված ձևի հայտ, մասնակցության համար սահմանված չափով վճարի անդորրագիր և անձնագիր: Հայտ ներկայացրած անձի տվյալները նույն օրը աճուրդի արձանագրողը գրանցում է մասնակիցների գրանցամատյանում (կցվում է՝ Ձև N 1) :

9. Աճուրդի մասնակցության հայտը չի ընդունվում, եթե հայտ ներկայացնողը չի հանդիսանում աճուրդով վաճառվող լոտ(եր)ի սեփականության իրավունքի սուբյեկտ:

10. Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից 3 աշխատանքային օր առաջ:

ԱՃՈՒՐԴԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒ ՄԱՍՆԱԿԻՑ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

11. Աճուրդն անցկացվում է հրապարակային ծանուցման մեջ նշված օրը՝ ժամը 9:00-18:00 ընկած ժամանակահատվածում:

12. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է կատարվի զանգվածային լրատվության միջոցներով և էլեկտրոնային միջոցների օգնությամբ՝ աճուրդի օրվանից մեկ ամիս առաջ:

Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը աճուրդի կայացման օրվանից առնվազն 1 օր առաջ զետեղվում է Ջերմուկի համայնքապետարանի վարչական շենքում՝ տեսանելի վայրում, ցուցատախտակի վրա:

13. Աճուրդի մասին հրապարակային ծանուցումը պետք է պարունակի օրենքով սահմանված տեղեկությունները:

14. Աճուրդում վաճառվող գույքի (լոտի) վիճակի, ինչպես նաև դրա վերաբերյալ հրապարակված տվյալների անճշտության համար աճուրդի կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում, եթե անճշտությունը չի կատարվել իր կողմից:

15. Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն կանոնակարգին կարող են ծանոթանալ Ջերմուկի համայնքապետարանում՝ աճուրդի մասին ծանուցումը հրապարակելու պահից մինչև աճուրդը սկսվելու պահից առնվազն 30 րոպե առաջ:

16. Կանոնակարգի և աճուրդի հետ կապված այլ փաստաթղթերի պատճենները տրամադրվում են համապատասխան դիմումի հիման վրա:

17. Աճուրդի մասին հրապարակային ծանուցման փոփոխությունները և լրացումները կատարվում են օրենքով սահմանված կարգով:

18. Աճուրդի մասնակիցները և մասնակից չհամարվող անձինք (այսուհետ՝ դիտորդ) աճուրդի առանձնասենյակում զբաղեցնում են առանձին նստատեղեր: Աճուրդի մասնակից չհամարվող գրանցված անձինք սահմանված կարգով վճարում են մուտքի վճար: Աճուրդի մասնակից չհամարվող գրանցված անձանց աճուրդի սկսելու պահից 30 րոպե առաջ տրամադրվում են դիտորդի կարգավիճակը հավաստող տոմսեր (կցվում է՝ Ձև N 3), որի համար վճարվում է մուտքի վճար:

19. Մուտքի վճարի չափը (դիտորդի տոմսի արժեք) սահմանվում է 5000 (հինգ հազար) դրամ:

20. Աճուրդի մասնակիցները և դիտորդները պարտավոր են չխոչընդոտել աճուրդի անցկացմանը և հետևել հետևյալ կանոններին.

1) չհայտնել իրենց դժգոհությունը, սպառնալիքը կամ գոհունակությունը որևէ մասնակցի, մասնակից չհամարվող անձի, աճուրդային հանձնաժողովի կամ աճուրդավարի գործողությունների նկատմամբ,

2) չխոսել աճուրդի ընթացքում, բացառությամբ սույն կանոնակարգով սահմանված դեպքերի,

3) հարցադրումներ ուղղել աճուրդային հանձնաժողովին լոտի աճուրդը սկսվելուց առաջ կամ հետո, իսկ լոտի աճուրդի ընթացքում միայն աճուրդավարի թույլտվությամբ,

4) աճուրդի ընթացքում դուրս չգալ սենյակից կամ չվերադառնալ սենյակ,

5) չթաքցնել օրենքով սահմանված՝ աճուրդավարի կամ նրա ամուսնու ազգական լինելու հանգամանքը:

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԼՈՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

21. Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի), որոնք աճուրդի անցկացման օրը՝ աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ մուծել են նախավճար՝ աճուրդում վաճառվող լոտի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով և ստացել մասնակցի վկայական:

22. Աճուրդի կազմակերպիչը հրապարակային ծանուցման պահից սկսած՝ մինչև աճուրդի մեկնարկին նախորդող 3-րդ աշխատանքային օրը մասնակիցներին ընձեռում է հնարավորություն՝ լոտ(եր)ն ուսումնասիրելու համար դիմել համայնքապետարան յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-17:00 ընկած ժամանակահատվածում (բացառությամբ 13:00-14:00 ընկած ժամանակահատվածի):

23. Աճուրդի մասնակիցները նախավճարը, որը լոտով ներկայացված հողամասի 5 %-ի չափով է, վճարում են աճուրդի անցկացման օրը՝ աճուրդի մեկնարկից առնվազն 30 րոպե առաջ, որից հետո նրանց տրամադրում է մասնակցի վկայական (կցվում է՝ Ձև N 2):

24. Աճուրդի մասնակիցների մասին տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

ԱՃՈՒՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

25. Աճուրդներն անց են կացվում դասական (գնի ավելացման) եղանակով:

26. Աճուրդը սկսվում է, եթե մասնակիցների թիվը մեկ կամ ավելի է:

27. Աճուրդը անց է կացնում աճուրդավարը, որը հայտարարում է աճուրդի ձևը, գնային հայտեր ներկայացնելու կարգը, լոտի անվանումը, բնութագրող ցուցանիշները, մեկնարկային գինը, աճուրդային նվազագույն քայլի չափը, որը սահմանվում է լոտի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով և կարող է կլորացվել հարյուր դրամի ճշտությամբ մինչև առավելագույն ամբողջ թիվը:

28. Աճուրդի մասնակիցը բարձրացնում է իրեն տրված մասնակցի վկայականը, որով տալիս է իր համաձայնությունը հայտարարված գնով լոտը ձեռքբերելու մասին:

29. Յուրաքանչյուր մասնակից կարող է լոտի գինն ավելացնել մեկ կամ մեկից ավելի քայլերով՝ քայլի չափից ոչ պակաս գումարով, բարձրացնելով մասնակցի վկայականը:

30. Աճուրդավարը շարունակում է աճուրդն այնքան ժամանակ, քանի դեռ չի մնացել առավելագույն գին առաջարկած մեկ մասնակից, որը համարվում է աճուրդում հաղթած մասնակից՝ աճուրդավարի կողմից առաջարկված գինը երրորդ անգամ հայտարարելու և մուրճիկի երրորդ հարվածից հետո:

31. Եթե մի քանի մասնակիցներ միաժամանակ գնային հայտ են ներկայացրել հավասար չափով, որից հետո ավելի բարձր գնային հայտ չի ներկայացվել, ապա աճուրդավարը վիճակահանությամբ որոշում է աճուրդում հաղթող համարված մասնակցին:

32. Վիճակահանությամբ աճուրդում հաղթող համարված մասնակցի որոշումը կատարվում է հետևյալ պայմաններով՝ աճուրդային հանձնաժողովի անդամները բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ որոշում են միաժամանակ հայտ ներկայացրած մասնակիցներին, այնուհետև մասնակիցների մասնակցի վկայականին համապատասխան համարը պարունակող քառածալ թղթերը դրվում են ծրարների մեջ և լցվում ոչ թափանցիկ արկղի մեջ: Աճուրդում հաղթող մասնակից

է համարվում այն մասնակիցը, որի մասնակցի վկայականին համապատասխանող համարը աճուրդավարը առաջինն է հանում արկղից:

33. Աճուրդի արդյունքներն արձանագրվում են աճուրդի արձանագրողի կողմից: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը և հանձնաժողովի անդամները ստորագրում են աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը:

34. Եթե աճուրդի հաղթող ճանաչված անձը արձանագրության վերաբերյալ առարկություններ է ունենում, ապա դրանք նշվում են արձանագրության մեջ:

ԼՈՏԻ ԳՆԻ ՎՃԱՐՈՒՄԸ

35. Աճուրդում հաղթող ճանաչված անձը աճուրդի արդյունքների ամփոփումից հետո 10 օրվա ընթացքում պարտավոր է վճարել լոտի գինը:

Աճուրդում հաղթող ճանաչված անձին տրվում է լոտի օտարման մասին որոշման նախագիծ, որտեղ նշվում են վճարման ենթակա գումարները և համապատասխան հաշվեհամարները: Նախավճարը հաշվարկվում է հաղթողի կողմից վճարման ենթակա գումարի մեջ:

Աճուրդում հաղթող ճանաչված անձը՝ որոշման նախագծում նշված գումարը սահմանված ժամկետում վճարում է նշված հաշվեհամարին և վճարման անդորրագիրը ներկայացնում աճուրդի կազմակերպչին:

Աճուրդում հաղթող ճանաչված անձի կողմից լրիվ վճարումները կատարելուց հետո, բայց ոչ ուշ աճուրդի արդյունքները ամփոփելուց հետո 10-րդ օրը, աճուրդի կազմակերպիչը հաղթողին է տրամադրում աճուրդի արձանագրության մեկ օրինակը, լոտի օտարման մասին կազմակերպչի որոշումը և օտարման գործարքի համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

36. Սահմանված ժամկետում վճարումները չկատարելու դեպքում հաղթող ճանաչված անձի կողմից մուծված նախավճարը չի վերադարձվում և հաղթող է ճանաչվում սակարկությունների ընթացքում երկրորդ առավելագույն գին առաջարկած անձը, որը նույնպես պարտավոր է 10 օրվա ընթացքում ամբողջությամբ վճարել լոտի գինը: Գումարն ամբողջությամբ վճարելուց հետո՝ երկու օրվա ընթացքում, կողմերի միջև կնքվում է օտարման պայմանագիր, որը կողմերի նախաձեռնությամբ վավերացվում է նոտարական կարգով և ենթակա է պետական գրանցման: :

37. Աճուրդը համարվում է չկայացած, եթե աճուրդի մասնակցության համար հայտ չի ներկայացվել, կամ սակարկությունում հաղթած անձը հրաժարվել է լոտը ձեռք բերելուց:

38. Աճուրդի կազմակերպիչը աճուրդը կայանալու կամ չկայացած հայտարարվելու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցների գրավոր դիմումի հիման վրա նախավճարը վերադարձնում է աճուրդում չհաղթած մասնակիցներին:

39. Աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացքում կազմված փաստաթղթերը և նյութերը պահպանվում և արխիվացվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Աճուրդի անցկացման օրը և ժամը	Հայտերի ներկայացման օրը	Մասնակցի վկայականի համարը	Նշում հաղթող ճանաչելու մասին
1.					
2.					
3.					

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 սեպտեմբերի 2020թ. N 255-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,65035 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Կարմրաշեն գյուղում գտնվող 0,65035 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը, հողատեսքը՝ վարելահող, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 սեպտեմբերի 30
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 հոկտեմբերի 2020թ. N 256-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի ս/թ հոկտեմբերի 2-ի N 01 /08.1/6492-2020 գրությունը (մտից N 1180)՝

ո ր ո շ ու մ ե մ՝

1. ՀՀ վարչապետի հանձնարարությամբ՝ ռազմական դրության իրավական ռեժիմի շրջանակներում Արցախին և Արցախից տարհանված ու Ջերմուկ համայնքում ժամանակավորապես բնակություն հաստատած արցախցի ընտանիքներին, ինչպես նաև առաջնագիծ մեկնած երկրապահ կամավորական ջոկատներին տրամադրվող սոցիալական և նյութական աջակցության հետ կապված հարցերի համակարգման գործընթացի կենտրոնացված և կանոնակարգված լինելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

հանձնաժողովի նախագահ՝ Սամվել Մարգարյան –համայնքի ղեկավարի տեղակալ
անդամներ՝ Ստեփանոս Վարդանյան –աշխատակազմի գլխավոր մասնագետ
Արման Հայրապետյան– աշխատակազմի գլխավոր մասնագետ–աուդիտոր
Սմբատ Պապոյան – ֆինանսական բաժնի առեաջատար մասնագետ
Վահե Ղազարյան – առաջատար մասնագետ
Ժորա Բաբայան – Ջերմուկ քաղաքի բնակիչ (համաձայնությամբ)
Էդգար Գալստյան – Ջերմուկ քաղաքի բնակիչ (համաձայնությամբ)
Դավիթ Վարդանյան –Ջերմուկ քաղաքի բնակիչ (համաձայնությամբ)

2. Հանձնաժողովին՝ հաշվի առնելով համայնքի բնակչության կողմից տարերայնորեն նվիրաբերված և պահեստ մուտքագրված ապրանքների բազմազանությունը՝ օգնության բաշխման ժամանակ, ըստ նպատակահարմարության, որոշ ապրանքատեսակների բաշխումը հատահաշվարկից վերափոխել քաշայինի (կգ–ով), ինչպես նաև՝ ըստ բնակության հասցեների, յուրաքանչյուր դեպքում կազմել բաշխվող սննդի տեսականու անվանացանկ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 հոկտեմբերի 2
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հոկտեմբերի 2020թ. N 257-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 26-ի N 41-Ա որոշման համապատասխան, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 23 արձանագրություն՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել գյուղատնտեսական գործունեության նպատակով 2020 թվականի հոկտեմբերի 2-ին կայացած Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի 10-002-0445-0022 և 10-002-0445-0023 կադաստրային ծածկագրերով հողամասերի, մակերեսները՝ համապատասխանաբար՝ 3579,8 (երեք հազար հինգ հարյուր յոթանասունիններ ամբողջ ութ տասնորդական) և 3296,7 (երեք հազար երկու հարյուր իններսունվեց ամբողջ յոթ տասնորդական) քմ, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասերն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 23 արձանագրությունը՝ N 1 լոտով աճուրդի հանված Ջերմուկ քաղաքի 10-002-0445-0022 և 10-002-0445-0023 կադաստրային ծածկագրերով գյուղատնտեսական նշանակության հողամասերը 100 000 (հարյուր հազար) դրամով վաճառել աճուրդի միակ մասնակից, գնորդ ***Նորայր Ցոլակի Խաչատրյանին***:
2. ***Նորայր Ցոլակի Խաչատրյանի*** հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասերի առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 5
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հոկտեմբերի 2020թ. N 258-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 28-ի N 50-Ա որոշման համապատասխան, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 24 արձանագրություն՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել գյուղատնտեսական գործունեության նպատակով 2020 թվականի հոկտեմբերի 2-ին կայացած Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի 10-002-0407-0402 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 1,1 (մեկ ամբողջ մեկ տասնորդական) հա, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 24 արձանագրությունը՝ N 2 լոտով աճուրդի հանված Ջերմուկ քաղաքի 10-002-0407-0402 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասը հայտարարված մեկնարակային գնով՝ 150 000 (հարյուր հիսուն հազար) դրամով վաճառել աճուրդի միակ մասնակից, գնորդ ***«Ջերմուկի Նոր Կյանք» առողջարան ՍՊ ընկերությանը***:
2. ***«Ջերմուկի Նոր Կյանք» առողջարան ՍՊ ընկերության*** հետ, ի դեմս տնօրեն Արսեն Աշոտի Արսենյանի, օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 5
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հոկտեմբերի 2020թ. N 259-Ա

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂՈՒ N 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին, Ջերմուկ համայնքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N 41-Ա որոշման համապատասխան, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 25 արձանագրությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել հասարակական կառուցապատման նպատակով 2020 թվականի հոկտեմբերի 2-ին կայացած Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի 1-ին փակուղու N 3 հասցեում գտնվող 10-002-0001-0018 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 24 (քսանչորս) քմ, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 25 արձանագրությունը՝ N 4 լոտով աճուրդի հանված Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի 1-ին փակուղու N 3 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության հողամասը հայտարարված մեկնարկային գնով՝ 29 900 (քսանիննը հազար իննը հարյուր) դրամով վաճառել աճուրդի միակ մասնակից, գնորդ ***Մարգարիտ Ալբերտի Նահապետյանին:***

2. ***Մարգարիտ Ալբերտի Նահապետյանի*** հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 5
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հոկտեմբերի 2020թ. N 260-Ա

ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ ՆՈՎԱՅԻ ՓՈՂՈՑԻ N 17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին, Ջերմուկ համայնքի ավագանու 2012 թվականի հունվարի 30-ի N 11-Ա որոշման համապատասխան, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 26 արձանագրությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել բնակելի կառուցապատման նպատակով 2020 թվականի հոկտեմբերի 2-ին կայացած Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Սայաթ Նովայի փողոցի N 17 հասցեում գտնվող 10-002-0031-0139 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 481,9 (չորս հարյուր ութսունմեկ ամբողջ ինը տասնորդական) քմ, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 26 արձանագրությունը՝ N 5 լոտով աճուրդի հանված Ջերմուկ քաղաքի Սայաթ Նովայի փողոցի N 17 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության հողամասը վաճառել աճուրդում առավելագույն գին՝ 506 100 (հինգ հարյուր վեց հազար հարյուր) դրամ առաջարկած գնորդ ***Վահե Նորիկի Առաքելյանին:***
2. ***Վահե Նորիկի Առաքելյանի*** հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 5
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հոկտեմբերի 2020թ. N 261-Ա

ԱՎՏՈՏՆԱԿ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 19 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին, Ջերմուկ համայնքի ավագանու 2008 թվականի ապրիլի 29-ի N 18-Ա որոշման համապատասխան, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 27 արձանագրությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել ավտոտնակ կառուցելու նպատակով 2020 թվականի հոկտեմբերի 2-ին կայացած Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակի 12-րդ փողոցի N 19 հասցեում գտնվող 10-002-0028-0061 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 19,8 (տասնիննը ամբողջ ութ տասնորդական) քմ, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 27 արձանագրությունը՝ N 6 լոտով աճուրդի հանված Ջերմուկ քաղաքի Ձախափնյակի 12-րդ փողոցի N 19 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության հողամասը վաճառել աճուրդում առավելագույն գին՝ 21 000 (քսանմեկ հազար) դրամ առաջարկած գնորդ ***Հովհաննես Դավիթի Առաքելյանին:***

2. ***Հովհաննես Դավիթի Առաքելյանի*** հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 5
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հոկտեմբերի 2020թ. N 262-Ա

ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ ՆՈՎԱՅԻ ՓՈՂՈՑ N 31 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին, Ջերմուկ համայնքի ավագանու 2012 թվականի հունվարի 30-ի N 11-Ա որոշման համապատասխան, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 28 արձանագրությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել բնակելի կառուցապատման նպատակով 2020 թվականի հոկտեմբերի 2-ին կայացած Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Սայաթ Նովայի փողոց N 31 հասցեում գտնվող 10-002-0033-0008 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 472,6 (չորս հարյուր յոթանասուներկու ամբողջ վեց տասնորդական) քմ, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 28 արձանագրությունը՝ N 7 լոտով աճուրդի հանված Ջերմուկ քաղաքի Սայաթ Նովայի փողոց N 31 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության հողամասը 400 000 (չորս հարյուր հազար) դրամով վաճառել աճուրդի միակ մասնակից, գնորդ ***Տիգրան Դավիթի Սարգսյանին***:
2. ***Տիգրան Դավիթի Սարգսյանի*** հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանման կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 5
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հոկտեմբերի 2020թ. N 263-Ա

ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ 3-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ N 16 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին, Ջերմուկ համայնքի ավագանու 2008 թվականի ապրիլի 29-ի N 18-Ա որոշման համապատասխան, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 29 արձանագրությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել բնակելի կառուցապատման նպատակով 2020 թվականի հոկտեմբերի 2-ին կայացած Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի 3-րդ նրբանցքի N 16 հասցեում գտնվող 10-002-0032-0094 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 45,9 (քառասունհինգ ամբողջ ինը տասնորդական) քմ, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 29 արձանագրությունը՝ N 8 լոտով աճուրդի հանված Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի 3-րդ նրբանցքի N 16 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության հողամասը 46 000 (քառասունվեց հազար) դրամով վաճառել աճուրդի միակ մասնակից, գնորդ ***Լևոն Վարազդատի Հովհաննիսյանին***:
2. ***Լևոն Վարազդատի Հովհաննիսյանի*** հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանման կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 5
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հոկտեմբերի 2020թ. N 264-Ա

ՀԱՆԳՍՏԻ ԳՈՏԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՄԱՇՏՈՑԻ ՓՈՂՈՑԻ N 8/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 28-ի N 50-Ա որոշման համապատասխան, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 30 արձանագրությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել հանգստի գոտի կառուցելու նպատակով 2020 թվականի հոկտեմբերի 2-ին կայացած Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի N 8/1 հասցեում գտնվող 10-002-0024-0202 կադաստրային ծածկագրով հողամասի, մակերեսը՝ 1280,2 (հազար երկու հարյուր ութսուն ամբողջ երկու տասնորդական) քմ, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 30 արձանագրությունը՝ N9 լոտով աճուրդի հանված Ջերմուկ քաղաքի Մաշտոցի փողոցի N 8/1 հասցեում գտնվող հատուկ պահպանվող տարածքների նշանակության հողամասը 1045000 (մեկ միլիոն քառասունհինգ հազար) դրամով վաճառել աճուրդի միակ մասնակից, գնորդ ***Վլադիսլավ Սամսոնի Հարությունյանին***:
2. ***Վլադիսլավ Սամսոնի Հարությունյանի*** հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանման կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 5
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հոկտեմբերի 2020թ. N 265-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ՝ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԱՃՈՒՐԴԻ N 3 ԼՈՏՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԱՃՈՒՐԴԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 69-րդ հոդվածով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Ջերմուկի համայնքապետարանի՝ հողամասերի օտարման աճուրդային հանձնաժողովի՝ աճուրդը չկայացած համարելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 31 արձանագրությունը՝ **որոշում եմ՝**

1. Հաշվի առնելով այն, որ 2020 թվականի հոկտեմբերի 2-ին Ջերմուկի համայնքապետարանի հողամասերի օտարման աճուրդային հանձնաժողովի կողմից հայտարարված աճուրդի N 3 լոտով վաճառքի ներկայացված հողամասը գնելու միակ հայտը ներկայացրած և նախավճար վճարած անձը՝ Արման Արտեմի Եղիազարյանը, հայտարարել է հողամասը չգնելու իր որոշման մասին և, ըստ այդմ, լոտը չի վաճառվել, ապա տվյալ լոտի վերաբերյալ աճուրդը համարել չկայացած:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 հոկտեմբերի 5
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հոկտեմբերի 2020թ. N 266-Ա

«ՄՏՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափեր սահմանելու մասին» N 6-Ն որոշման, հիմք ընդունելով «ՄՏՍ Հայաստան» ՓԲ ընկերության կողմից լիազորված «Ռեդինետ» ՓԲԸ-ի տնօրեն Ա. Քարամյանի՝ ս/թ սեպտեմբերի 23-ի հայտը (մտից N 1186, 05.10.2020 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. «ՄՏՍ Հայաստան» ՓԲ ընկերությանը տալ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի աջակողմյան հատվածում օպտիկամանրաթելային կապուղու կառուցման համար թվով 28 (քսանութ) հենասյուների տեղակայման շինարարության թույլտվություն:

2. «ՄՏՍ Հայաստան» ՓԲ ընկերությունը պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք, ինչպես նաև համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 11250 (տասնմեկ հազար երկու հարյուր հիսուն) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՄՏՍ Հայաստան» ՓԲ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 հոկտեմբերի 5
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հոկտեմբերի 2020թ. N 267-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 7/5/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48.1 հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով Հայաստանի Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ հաստատված Կարգի 46.2 կետի «ա» ենթակետը և Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 19-ի N 16-Ա որոշումը և հաշվի առնելով «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ Ջերմուկի մասնաճյուղի կառավարչի դիմումը (մտից N 1192, 06.10.2020 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 7/5/4 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 4 քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակությամբ ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողամասը առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրել «ՎՏԲ Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերության Ջերմուկի մասնաճյուղին:

2. Սահմանել՝

- *Կառուցապատման իրավունքի տրամադրման ժամկետը մինչև՝ 07. 10. 2022 թ.,*
- *Կառուցապատման իրավունքի տրամադրման ամսական վճարի չափը՝ 80 000 (ութսուն հազար) դրամ (վարձավճարը վճարվում է մինչև ընթացիկ ամսվան հաջորդող 5 օրվա ընթացքում),*
- *Կառուցապատման իրավունքի տրամադրման նպատակը՝ բանկոմատ տեղադրելու և շահագործելու համար:*

3. «ՎՏԲ Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերության Ջերմուկի մասնաճյուղի հետ, ի դեմս մասնաճյուղի կառավարիչ Հ. Բալոյանի, օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր:

4. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է «ՎՏԲ Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերության Ջերմուկի մասնաճյուղի կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՎՏԲ Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերության Ջերմուկի մասնաճյուղին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 հոկտեմբերի 7
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հոկտեմբերի 2020թ. N 268-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԿԱԳ ԲԱԺՆԻ ՊԵՏ Լ. Ս. ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՋԵՐՄՈՒԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա. Պ. ՍԱՖԱՐՅԱՆԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի «Համայնքային ծառայողի ատեստավորման կարգը սահմանելու մասին» N 15-Ն հրամանը՝ **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության գլխավոր պաշտոններ զբաղեցնող (պաշտոնների ծածկագրերը՝ 1.3-1 և 1.3-2) համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Ջերմուկի տարածքային բաժնի պետ Արա Պարույրի Սաֆարյանի և ՔԿԱԳ բաժնի պետ Լուսիկ Սարիբեկի Սաղաթելյանի ատեստավորումն անցկացնել 2020 թվականի նոյեմբերի 13-ին, համապատասխանաբար՝ ժամը 12.00-ին և ժամը 12.30-ին:

2. Հաշվի առնելով, որ Ա. Պ. Սաֆարյանը և Լ. Ս. Սաղաթելյանը ունեն իրենց զբաղեցրած պաշտոնի ենթախմբի համար օրենքով նախատեսված համապատասխան դասային աստիճանից բարձր դասային աստիճան և համայնքային ծառայության նույն պաշտոնն զբաղեցնելու ընթացքում ատեստավորվել են՝ նրանց ատեստավորումն անցկացնել փաստաթղթային եղանակով:

3. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Է. Թադևոսյանին. սահմանված կարգով կազմակերպել սույն որոշման 1-ին կետում նշված ատեստավորման նախապատրաստական աշխատանքները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 հոկտեմբերի 12
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2020թ. N 269-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆԴԱՄԱՍԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԵՂԱՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՉՈՐԱՑԱԾ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 15-րդ և 22-րդ ենթակետերով և ելնելով բնապահպանական և սոցիալական խնդիրների լուծման անհրաժեշտությունից՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի «Սաֆոյի բին» կոչվող հանդամասի և դրան հարակից տեղանքի բարեկարգման և սանիտարական մաքրման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ թույլատրել հատելու այդ տարածքում գոյություն ունեցող չորացած ծառերը:

2. Ծառերի հատման արդյունքում գոյացած փայտանյութը, որպես վառելիք, տրամադրել Գնդեվազ գյուղից ՀՀ–ում հայտարարված ռազմական դրությամբ պայմանավորված առաջնագիծ մեկնած պահեստազորայինների ընտանիքներին:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար Հայրապետ Մկրտչյանին: :

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 հոկտեմբերի 13
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2020թ. N 270-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 194-Ա ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի N 244-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի ս/թ սեպտեմբերի 15-ի՝ Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ–15092020-10-0084 որոշումը՝ ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,11604 հա մակերեսով հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» N 244-Ա որոշումը:

2. Հաշվի առնելով, որ «ՋԵՐՍԱՆ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 7/5 հասցեում գտնվող շինությունների պահպանման և սպասարկման հողամասը հատուկ պահպանվող տարածքների է՝ առողջարարական նպատակներով նախատեսված գործառնական նշանակությամբ, իսկ ընդլայնման համար նախատեսված համայնքային սեփականության հողամասը՝ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, և հողամասի ուղղակի վաճառքի գործարքը հակասում է օրենսդրության նորմերին՝ ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2019 թվականի սեպտեմբերի 30-ի ««ՋԵՐՍԱՆ» ՍՊ ընկերության սեփական հասարակական նշանակության շինությունների սպասարկման հողամասն ընդլայնելու և ուղղակի վաճառքով օտարելու մասին» N 194-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 սեպտեմբերի 30
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հոկտեմբերի 2020թ. N 271-Ա

«ՋԵՐՍԱՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 7/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՐԵՔ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածին համապատասխան՝ հաշվի առնելով «Ջերսան» ՍՊ ընկերության տնօրենի դիմումը (մտից N 1221, 15.10.2020 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. «Ջերսան» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 7/5 հասցեում գտնվող 1,5301 հա մակերեսով հողամասը (նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների, գործառնական նշանակությունը՝ առողջարարական նպատակներով նախատեսված) բաժանել երեք առանձին գույքային միավորների՝ ըստ «ՔՈՇԿ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հատակագծերի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգի» 29-րդ կետի «բ» ենթակետի և 48-րդ կետի հիման վրա սույն որոշման առաջին կետի հիմքով առաջացած նոր գույքային միավորներին տրամադրել հետևյալ հասցեները.

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Շահումյան փողոց N 7/5 - մակերեսը՝ 1,03436 հա

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Շահումյան փողոց N 7/5/5 - մակերեսը՝ 0,06821 հա

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Շահումյան փողոց N 7/5/6 – մակերեսը՝ 0,42744 հա

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հոկտեմբերի 2020թ. N 272-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ԱՇՆԱՆԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի ուղերձը՝ կորոնավիրուսային նոր հիվանդության 14.10.2020թ. հրապարակված վարակակիրների թվի ռեկորդային վտանգավոր աճի, առողջապահական համակարգը հիմնականում ռազմաճակատին ի սպաս դնելու խիստ անհրաժեշտության և աշնանային երկշաբաթյա արձակուրդը տեղափոխելու անհրաժեշտության մասին՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ս/թ հոկտեմբերի 15-ից հոկտեմբերի 29-ը ներառյալ դադարեցնել «Ջերմուկ համայնքի «Զատիկ» մանկապարտեզ» ՆՈՒՀ և «Գնդեվազի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գործունեությունը:

2. «Ջերմուկ համայնքի Ռ. Մելիքյանի անվան արվեստի դպրոց» և «Ջերմուկ համայնքի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային ուսումնական կազմակերպությունների՝ նոյեմբերի 2-ից մեկնարկելիք աշնանային երկշաբաթյա արձակուրդը տեղափոխել հոկտեմբերի 15-ից հոկտեմբերի 29-ը ներառյալ:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված կազմակերպությունների բոլոր աշխատակիցներին, բացառությամբ կազմակերպության ղեկավարից, հաշվապահից և պահակներից, 2020 թվականի հոկտեմբերի 15-ից հոկտեմբերի 29-ը ներառյալ համարել հարկադիր պարապուրդի մեջ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 հոկտեմբերի 15
Ջերմուկ